«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Կրտսեր դպրոցական տարիք: Վեց տարեկան դպրոցականների տարիքային առանձնահատկությունները: Խաղը որպես ուսուցման միջոց:

Առարկան՝ <<Մայրենի>>

Հետազոտող ուսուցիչ՝ Դասվար՝ Սուսաննա Հայրապետյան

Ուսումնական հաստատություն՝ <<Դ. Հովսեփյանի անվան հ. 191 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ

Երևան 2023

Բովանդակություն

Բովանդակություն.....2

Ներածություն 3

Գլուխ 1.Կրտսեր դպրոցական տարիք: Վեց տարեկան դպրոցականների տարիքային

առանձնահատկությունները..... 4

Գլուխ 2. Խաղը որպես ուսուցման միջոց 15

2.1 Խաղային տեխնոլոգիաների կիրառումը մայրենիի դասերին..... 16

Եզրակացություն 20

Օգտագործված գրականության ցանկ 21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

12-ամյա կրթությունը բերեց նրան,որ այժմ դպրոց են հաճախում վեց տարեկան երեխաները և հետևաբար պետք է հաշվի առնել վեց տարեկան դպրոցականի տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները : Վեց տարեկանում ճգնաժամի դրսևորումը խոսում է այն մասին, որ երեխան սոցիալական առումով պատրաստ է դպրոցական ուսուցման համար : Նշանակում է , որ ուսումնական գործունեության հիմքը պետք է լինի երեխաների տարիքային առանձնահատկությունները, զարգացման օրինաչափությունները : Իսկ խաղային ուսուցումը նպաստում է ուսումնական գործունեությանը, բավարարում խաղալու դեռևս ցանկալի պահանջմունքը :Խաղի շնորհիվ երեխաների հետաքրքրությունը առարկաների հանդեպ մեծանում են ,իսկ խաղն իր հերթին նպաստում է հիշողության , ուշադրության զարգացմանը : Ուսումնասիրելով կրտսեր դպրոցականի տարիքային առանձնահատկությունները և տարիքին բնորոշ հետաքրքրությունները, ֆիզիոլոգիան,կկարողանանք գրագետ, ճիշտ մոտեցում ցուցաբերել երեխային, ապահովել ադապտացիան դպրոցին,կկարողանանք ծավալել արդյունավետ ուսումնական գործունեություն :

Արդիական է թեման նրանով, որ կրտսեր դպրոցական տարիքը անձի կայացման կարևոր փուլերից է և երեխան գործունեության մի տեսակից՝ խաղայինից անցնում է ուսումնական գործունեության, ավելանում են իր պարտականությունները : Հետևաբար կարևոր է ուսումնասիրել երխայի ներաշխարհը և դառնալ նրա աջակիցն ու ընկերը :

Թեմայի ընտրությունը պայմանավորված է նրանով, որ դասավանդելով տարրական դպրոցում, էլ ավելի խորությամբ ուսումնասիրեմ թեման , վերլուծության ենթարկեմ տարիքային առանձնահատկությունները , խաղի արդյունավետությունը՝ որպես կրտսեր դպրոցականի ճանաչողական հետաքրքրությունների խթանման միջոց :

Գլուխ 1. Կրտսեր դպրոցականի տարիք : Վեց տարեկան դպրոցականների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները :

Արդյունավետ ուսումնական գործունեությունը ենթադրում է ուսուցում հիմնված տարիքային առանձնահատկությունների վրա : Շատ տեղին է Կոմիտասի մեկնաբանությունն այս առումով՝ << Եթե մանուկը չի հասկնար ձեր դաստիարակությունը , հանցանքը ձերն է, որովհետև չեք կրցած հասկնալ անոր հոգին. պետք է վար իջնել մինրև անոր հոգեկան աստիճանը և զայն առնելով ձեզի հետ բարձրացնել>> :

Հետևաբար ուսուցումը պետք է կառուցել նրանց հոգեկան զարգացման օրինաչափությունների ,տարիքային առանձնահատկությունների,տարիքային փոփոխությունների իմացության հիման վրա : Վեց տարեկան երեխաների մոտ նկատվում է բոլոր համակարգերի բուռն զարգացում,ինչը ենթադրում է,որ երեխաները պատրաստ են իրենց տարիքին բնորոշ մտավոր և ֆիզիկական աշխատանքի :

Վեց տարեկանը բնութագրվում է ճգնաժամային տարիք և անհրաժեշտ է հաշվի առնել տարիքային փոփոխությունները :

Ֆիզիոլոգիական առանձնահատկություններ

ա/ Վեց տարեկանում յուրաքանչյուր առողջ երեխա պատրաստ է յուրացնել բավականաչափ տեղեկատվություն ,սակայն դեռևս ավարտված չէ նրա գլխուղեղի ձևավորման գործընթացը և շատ վտանգավոր է մտավոր գերբեռնվածությունը :

բ/ Վեց տարեկան երեխայի մոտ զարգացման փուլում է գտնվում ոսկրամկանային համակարգը : Գրուսուցումը կազմակերպելիս անհրաժեշտ է հաշվի առնել մատների,դաստակի թուլությունը,ողնաշարի փափկությունը : Մատների ոսկրացման գործընթացը ավարտվում է 10 տարեկանին մոտ,այդ իսկ պատճառով ձեռքն արագ հոգնում է : Ոչ ճիշտ կեցվածքից և երկարատև աշխատանքից կարող է խաթարվել երեխայի առողջությունը՝ տեսողություն, ողնաշարի թեքություն, ներքին օրգանների աշխատանք :

Հոգեբանական առանձնահատկություններ

Երեխայի հոգեբանական առանձնահատկությունները ներառում են անձնային և կամային ոլորտները:

Կրտսեր դպրոցականի տարիքը անձի կայացման կարևորագույն փուլերից է, որի ընթացքում տեղի է ունենում անհոգ մանկությունից անցում մի շրջանի, երբ անհրաժեշտ է կրել պատասխանատվություն, իրականացնել պահանջներ:

Հենց այս ընթացքում է սկսում ձևավորվել կամածինությունը:

Իմացական ոլորտի զարգացում

Ուսումնական գործունեության համար կարևոր իմացական գործընթացներից է հիշողությունը: Սովորողին անհրաժեշտ է մտապահել հսկայածավալ տեղեկատվություն և վերարտադրել այն : Ուսուցիչն օգնում է երեխային կիրառել մտապահման որոշակի հմտություններ ՝ իմաստավորված մտապահում և վերարտադրման հնարներ:

Ուսուցման ողջ գործընթացը , գիտելիքների ,կարողությունների, հմտությունների ձեռքբերումը ենթադրում է աշակերտի ինքնակառավարում,ինչը հնարավոր է իրականացնել զարգացած կամածին ուշադրության դեպքում : Ուսուցման սկզբնական շրջանում աշակերտին գրավում է միայն արտաքին կողմը,պետք է զարգացնել դիտողականությունը,երևույթների ըմբռնումը,ընկալումը :

Աստիճանաբար ուսումնական գործունեության ընթացքում երեխայի մոտ զարգանում են ուշադրության բաշխումը և տեղափոխելիությունը:

Մտածողության զարգացում

Այս տարիքում առաջնային պլան է մղվում մտածողության զարգացումը: վեց տարեկան երեան ունի ակնառու- պատկերային մտածողություն: Նա դյուրին է ընկալում և յուրացնում այն, ինչն ինքը տեսել է շոշափել,զգացել ու ապրել:Թեև երեխան կատարում է մտավոր աշխատանք, միևնույն է նրա գործունեության

առաջատար տեսակը մնում է խաղը:Տվյալ տարիքում նպատակահարմար է ուսուցումն իրականացնել խաղային հնարներով: Կրտսեր դպրոցական տարիքում զարգանում և հարստանում է երեխայի խոսքը: Երեխայի մեջ զարգանում է գնահատող և դատողական խոսք կառուցելու կարողությունը :Երեխան արդեն կարողանում է ճշգրիտ պատասխանել իրեն ուղղված հարցերին,ունի բավարար բառապաշար ինքնուրույն խոսք կառուցելու համար:Շարունակական աշխատանք է պետք տանել բառապաշարի հարստացման ուղղությամբ,որ կարողանան կառուցել դատողական և նկարագրական խոսք: Անհրաժեշտ է ապահովել խոսքային միջավայր, արտահայտվելու և շփվելու հնարավորություններ:Պետք է սեր առաջացնել ընթերցանության հանդեպ,ինչը կարևոր է խոսքի զարգացման համար:

Այս տարիքում ձևավորվում է նաև գրավոր խոսքը: Սովորաբար նրանք դժվարանում են գրավոր շարադրել իրենց խոսքը: Ուսուցման ընթացքում պետք է կիրառել խոսքի բոլոր դրսևորումները: Սա շարունակական գործընթաց է և տարրական դպրոցն ավարտող յուրաքանչյուր երեխա պետք է կարողանա գրավոր արտահայտել իր մտքերը:

6-7 տարեկանի ճգնաժամ

Տարիքային հոգեբանության մեջ հայտնի են մի քանի ճգնաժամային փուլեր, որոնց մեջ առանձնակի տեղ է զբաղեցնում 6-7 տարեկանի ճգնաժամը:

Երեխան մուտք է գործում իր կյանքի դժվար և բեկումնային փուլ: Նա կրում է այն փոփոխությունները, որոնք ի հայտ են գալիս անցումային շրջանում՝ դեռ մեծ չէ, բայց արդեն փոքր էլ չէ, դեռ ցանկանում է, բայց պետք է...

Այս տարիքի երեխային բնութագրելիս, որպես առաջնային բնութագիր, կարելի է ընդգծել մանկական անմիջականության կորուստը: Երեխայի նախկին անմիջականությունը ցույց է տալիս, որ երեխայի արտաքին և ներքին աշխարհները համընկնում են: Անմիջականության կորուստը նշանակում է, որ երեխայի վարքագծում հայտնվում են ինտելեկտուալ բաղադրամասեր, որոնք ճեղքում են ապրումներն ու անմիջական վարքագծերը:

Նա իրեն <<մեծահասակ>> զգալու, հասուն լինելու, ինքնուրույն որոշումներ ընդունելու, կարծիք հայտնելու պահանջմունք է ունենում: Դպրոց հաճախելը երեխայի համար սոցիալական դիրքի ձեռքբերում է, ինչն էլ արդեն մեծանալու նշան է:

Ինչպես նշում է հայտնի հոգեբան Լ. Բոժովիչը, 6-7 տարեկանի ճգնաժամը երեխայի սոցիալական ես-ի ծնվելու շրջանն է: Եթե փորձենք մեկ բառով նկարագրել այն ձեռքբերումը, որին հասնում է երեխան այս տարիքային փուլում, դա կամածինությունն է:

Գոյություն ունեն մի քանի հստակ վարքային բնութագրումներ, որոնք առաջ են գալիս երեխայի մոտ ճգնաժամային շրջանում՝ դադար (երեխան կարծես չի լսում, չի արձագանքում), վեճ, խորամանկություն, կամակորություն, ինքնուրույնություն: Ճգնաժամային տարիքի վերջում անցնում են այս վարքային բնութագրականները, մնում է ինքնավստահությունը, ինքնասիրությունը, ինքնագնահատականը:

Դպրոցական հարմարվողականություն

Դպրոցական հարմարվողականությունը երեխաների ճանաչողական, հուզա -կամային ոլորտների վերադասավորվածությունն է դպրոցական մշտական և կազմակերպված ուսուցման պայմաններում: Կրտսեր դպրոցականի հարմարվողականությունը ընկալվում է որպես երեխայի կողմից նոր սոցիալական պայմաններին, նոր հարաբերություններին, պահանջներին, գործունեության նոր տեսակներին հարմարվելու կարողություն:

Երեխան հայտնվելով նոր սոցիալական իրավիճակում, փորձում է ակտիվորեն հարմարվել դրան: Երեխայի ֆիզիկական ակտիվությունը կրճատվում է, մինչդեռ շարժվելու պահանջմունքը մնում է նույնը: Բացի այդ, առաջին դասարանցին մտնում է նոր հարաբերությունների մեջ, նա պետք է իրականացնի դպրոցականից սպասվող պահանջները, ինչն իր հերթին գերծանրաբեռնում է երեխային: Ուսուցումը դպրոցում պահանջում է մտավոր լարվածություն, կամային ջանքեր, բարձր աշխատունակություն: Երեխայի դպրոցին հարմարվելու հանգամանքը հատուկ ուշադրություն է պահանջում և այստեղ մեծ դեր ունի ուսուցիչը, որպեսզի դպրոցական հարմարվողականությունը երեխայի համար հեշտ լինի հաղթահարելը:

Առանձնակի ուշադրության է արժանի բարենպաստ միջավայրի ստեղծումը երեխայի համար: Երեխայի ձեռքբերումները երբեք չպետք է համեմատել մյուս երեխաների հետ, մշտապես պետք է խրախուսել երեխայի ամենափոքրիկ հաջողությունը, երեխայի ուշադրությունը պետք է տեղափոխել ներանձնային և միջանձնային հարաբերությունների վրա: Դպրոցական հարմարվողականությունը ամենից առաջ դրսևորվում է նրանում, որ երեխան հաճույքով է դպրոց գնում: Դպրոց չգնալու ցանկության հիմքում միշտ չէ, որ ուսումնական դժվարություններն են ընկած: Որպեսզի վեց տարեկան երեխայի դպրոցին հարմարվելու գործընթացը հաջող ընթանա, ուսուցիչը պետք է ջերմ հարաբերություններ հաստատի երեխաների հետ, չճնշի նրանց ինքնուրույնությունը,անհատական վերաբերմունք ցուցաբերի յուրաքանչյուր աշակերտի՝ հաշվի առնելով ,որ շատ կամային որակներ դեռ զարգացած չեն:

Աշխատանք ծնողների հետ

Աշխատանք պետք է տանել նաև ծնողների հետ: Ծնողական ժողովներին պետք է կազմակերպել սեմինարներ, ծնողներին ներկայացնել արդի ժամանակաշրջանում կրտսեր դպրոցականների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները, դժվարությունները հաղթահարելու եղանակները: Պետք է կազմակերպել անհատական հանդիպումներ ծնողների հետ,համագործակցել բազմամասնագիտական խմբի մասնագետների հետ: Դպրոց-ընտանիք առողջ

համագործակցությունը օգնում է հաղթահարել բոլոր դժվարությունները:

Անհրաժեշտ է հիշել

Դասի տևողությունն առաջին դասարանում 35 րոպե է, սա հարկավոր է պահպանել, հակառակ դեպքում ֆիզիկական հոգնածությունը կվնասի ուսումնական աշխատանքի արդյունավետությանը և սովորողների առողջությանը: Դասի ընթացքում անհրաժեշտ է անցկացնել ֆիզկուլտ դադարներ,շարժախաղեր:

Մյուս կարևոր առանձնահատկությունը տնային աշխատանքների բացառումն է կամ նվազագույնի հասցնելը:

Ուշադիր պետք է լինել երեխաների ֆիզիկական դաստիարակությանը, առողջության պահպանմանը:Սերնդի առողջության պահպանումը դպրոցի կարևոր խնդիրներից է և դրան պետք է հատուկ ուշադրություն դարձնել:

Գլուխ 2. Խաղը որպես ուսուցման միջոց:

Դիդակտիկան և դերային խաղերի կիրառումը կրտսեր դպրոցում:

Երեխան մինչև 10-ամյա հասակը զվարճանք է պահանջում, և նրա պահանջը կենսականորեն օրինական է:Նա ուզում է խաղալ, նա խաղում է ամեն բանով, նա աշխարհը ճանաչում է ամենից առաջ և ամենից հեշտ խաղի մեջ,խաղով :

Մ. Գորկի

Դպրոցական կյանքի սկիզբը լուրջ փոփոխություն է երեխայի համար: Երեխան պետք է հարմարվի նոր պահանջներին ,ինտեգրվի նոր միջավայր: Այդ ամենի հետ մեկտեղ պետք է ստանա որոշ գիտելիքներ՝ զարգացնելով իր հնարավորությունները: Ուսումնական գործընթացի արդյունավետությունը կախված է մեթոդների ճիշտ ընտրությունից,տարիքային և անհատական առանձնահատկություններից:

Դասի արդյունավետությանը նպաստող գործոններից է խաղը, խաղային

տեխնոլոգիաները: Խաղն ուղեկցում է երեխային նրա ողջ կյանքում:

<<Բնության, խաղերի, երաժշտության, հեքիաթների աշխարհը, որը շրջապատում էր երեխային մինչ դպրոց գնալը, չպետք է փակվի նրա առջև դպրոցի դռներով:

Երեխան միայն այն ժամանակ անկեղծորեն կսիրի դպրոցը, դասարանը, երբ ուսուցիչը պահպանի այն ուրախությունները, որոնք երեխան ուներ մինչ այդ>>:

Խաղըդիտարկվում է առաջատար գործունեություն,որովհետև խաղի ընթացքում երեխայի անհրաժեշտ են զարգացման նոր բարձր աստիճանի անցնելու համար: Երեխայի համար խաղն ինքնադրսևորման միջոց է:

Առաջին դասարանում ուսումնական գործընթացը կարելի է անցկացնել երկու եղանակով՝ ուսուցում-խաղ, խաղ-ուսուցում սկզբունքով: Խաղային գործունեությունը ազդում է ուշադրության, հիշողության, մտածողության, երևակայության և իմացական գործընթացների վրա: Խաղը նպաստավոր պայմաններ է ստեղծում, որ երեխան սահուն ընդգրկվի ուսումնական գործունեության մեջ: Խաղը պետք է ունենա կոնկրետ նպատակ,երեխան պետք է խաղով սովորի:

Կրտսեր դպրոցում կարևոր նշանակություն ունի <<զվարճացնելով ուսուցանելու>> սկզբունքի գործադրումը: <<Զվարճալի ուսուցումը >>կրտսեր դպրոցականի համար ուսումնական աշխատանքը հեշտ, հաճելի, արդյունավետ դարձնելու հուսալի միջոց է: Ուսումնական այս եղանակի հիմնադիրը մեզանում եղել է Հ. Պապեսյանը , որի <<Արև>> այբբենարանը կազմված է այս եղանակով: Պապեսյանը գրում է . <<Կը կարծեմ, թե ուսուցիչը կենդանի դասագիրք է մանուկին՝ իր հմայիչ լեզվով, զվարթ ու հաճելի դասավանդությամբ և իր մանկավարժական անուշ ու դյուրուսույց եղանակով կրնա ավելի հրապուրիչ դարձնել դասագիրքը և հետևաբար քիչ հագնությամբ ձեռք գցելու այն ցանկալի արդյունքը,որու համար կը տնքնի ինքն արդեն>>:

Այս սկզբունքն արդի է, պետք է աշխատել զվարճացնելով՝ օգտագործելով հանելուկներ,կատա-խնդիրներ,դիդակտիկ խաղեր՝ միաժամանակ տալով

գիտելիքներ:

<<Առանց կրթական խաղերի դասարանում հնարավոր չէ աշակերտներին ներգրավել գիտելիքների աշխարհ,դարձնել նրանց ակտիվ մասնակիցներ և դասի ստեղծողներ>>

Շ. Ամոնաշվիլի

Բազմազան խաղերի մեջ դիդակտիկ խաղերի դերն առանձնապես մեծ է: Դիդակտիկ խաղերի անցկացման հիմնական նպատակը երեխաների մտավոր կարողությունները զարգացնելն է: կրտսեր դպրոցականների մասնակցությունը դիդակտիկ խաղերին նպաստում է նրանց ինքնքադրսևորմանը և ինքնահաստատմանը, ձևավորվում են կամային որակներ: Խաղն օգնում է ուսուցման ընթացքում բազմաթիվ նպատակներ իրականացնել՝կրթական, դաստիարակչական կարգապահական, հաղորդակցման, միմյանց լսելու և համագործակցելու, կարողության զարգացման հետ կապված : Խաղերի միջոցով կարելի է զարգացնել ստեղծագործական կարողությունները,հաշվողական և լեզվական հմտությունները:

Դերային խաղերի գլխավոր տարրը դերն է: Դերերի միջոցով երեխաներն արտացոլում են կերպարին բնորոշ հարաբերությունները, կանոններ, որոնք յուրացվում են և գիտակցվում խաղի ընթացքում: Դերային խաղի միջոցով սովորողները ձեռք են բերում խոսքի և արտահայտչականության զարգացում, ընթերցանության հմտությունների զարգացում,խմբերով աշխատելու կարողություն, երաժշտության,պատկերի,գույների զգացողություն,ճաշակի զարգացում, ինքնադրսևորման կարողության զարգացում: Դերախաղերն օգնում են խթանել ստեղծագործական կարողությունը և երևակայությունը, երեխաները ձեռք են բերում սոցիալական հմտություններ:

Ուսուցողական խաղերը պետք է համապատասխանեն դասի թեմային, կիրառվեն անցած նյութն ամրապնդելու և ամփոփելու նպատակով:

Դիդակտիկ խաղերի միջոցով ուսուցիչը լուծում է հետևյալ կարևորագույն

խնդիրները:

Կրթական՝ օգնում է սովորողների կողմից ուսումնական նյութի ամրապնդմանը, օգնում է ընդլայնել սովորողների մտահորիզոնը:

Դաստիարակչական՝ նպաստում է ինքնակառավարմանը և ինքնուրույնությանը, դաստիարակում է կամք, համոզմունքներ:

Զարգացնող՝ զարգացնում է երևակայությունը, ստեղծագործական միտքը:

Երեխայի կամային վարքի զարգացման համար հրաշալի միջոց է կանոններով խաղը : Շարժուն երեխաները խաղում են և ձգտում են կատարել այդ խաղի կանոնները՝ երեխաները սկսում են իրենց գործողությունները ենթարկել այդ կանոններին, արդյունքում ձևավորվում է կամային և զգացմունքային ինքնակարգավորում:

Խաղը վախի, տագնապի, անվստահության զգացողության հաղթահարելու լավագույն միջոց է: Խաղալով երեխան իրեն զգում է խմբի լիարժեք անդամ, դառնում է ինքնավստահ:

Դիդակտիկ խաղերի նպատակն է սովորողին խաղալով սովորեցնել համեմատելու, համադրելու, դասակարգելու,ընդհանրացնելու, այսինքն՝ մտավոր գործողություններ կատարելու կարողություններ:

Արդի է տեղեկատվական տեխնոլոգիաների դերը կրտսեր դպրոցում:

Ակադեմիկոս Սեմյոնովն ասել է . << Ժամանակակից դպրոցի կարևոր խնդիրն է սովորեցնել մարդուն ապրել տեղեկատվական աշխարհում>>:

ՏՀՏ- ների օգտագործման նպատակներն են՝

. բարձրացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունը,

. օգտագործել այն որպես ինքնքկրթության միջոց,

. բարձրացնել սովորելու մոտիվացիան,

. նպաստել սովորողի ճանաչողական կարողությունների խթանմանը:

Ըստ նոր չափորոշչի՝ երկրորդ դասարանից ուուցանվում է <<Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն >> առարկան:

Տարրական ծրագրի նպատակն է աշակերտներին ներկայացնել ալգորիթմիկ մտածողության ամենապարզ տարրերը, ծանոթացնել հաակարգչային սարքավորումներից և թվային միջավայրից անվտանգ օգտվելու միջոցները,յուրացնել համակարգչային սարքավորումների և դրանց բաղադրիչների աշխատանքի հիմնական սկզբունքները,ինչպես նաև օգտագործել համակարգիչները որօես աշխատանքային գործիքներ:

Ամենակարևորը, երեխաները կսովորեն ինչպես անվտանգ օգտվել էլեկտրոնային սարքերից՝ պահպանելով նաև առողջությունը:

Հաշվի առնելով կրտսեր դպրոցականի հոգեբանական առանձնահատկությունները՝ ՏՀՏ-ների հետ աշխատանքը տարրական դպրոցում պետք է չափավորված լինի և հստակ: Կարելի է կիրառել <<Quizizz>>-ով ներկայացվող ուսուցողական նշանակություն ունեցող խաղեր: Երեխաները կհասկանան, որ համակարգիչը տեղեկատվական հզոր աղբյուր է:

Այսպիսով խաղին պետք է վերաբերվել ոչ թե ժամանցի, այլ գործնական բազմափուլ աշխատանքի, որի յուրաքանչյուր փուլ լուծում է կոնկրետ նպատակներ: Հետևաբար, անհրաժեշտ է մանրակրկիտ պլանավորել խաղը՝ նախապես սահմանելով նպատակ, վերջնարդյունքներ:

<u>Երեխան խաղալով</u>՝

. ճանաչում է աշխարհը,

. ինքնահաստատվում է,

. դառնում է անկաշկանդ,

. գիտելիքներ է ձեռք բերում,

. ինքնադրսևորվում է:

Խաղերը զարգացնում են՝

. հիշողությունը,

. ուշադրությունը,

.ստեղծագործական միտքը,

.երևակայությունը,

.մտածողությունը,

.խոսքը:

<<Խաղը նրա ՝ մանուկ մարդու բնական, օրգանական պահանջն է, նրա լրջությունն է, նրա էությունն է: Կյանքում ամեն բանի նա խաղով է մոտենում, դա նրա ձևն է, նրա մեթոդն է: Եվ ամեն բան, ինչ որ նրան տրվում է խաղով ուրախությունով է ընդունում, հեշտ էլ յուրացնում է առանց ձանձրանալու,առանց հոգնելու>>:

Հ. Թումանյան

Խաղի մասին ասել են…

Խաղերը պետք է համապատասխանեն ազատ ծնված մարդու արժանապատվությանը,ոչ շատ պիտի հոգնեցնեն երեխային, և ոչ շատ անիմաստ… Երեխայի խաղերը պիտի կրկնօրինակեն ապագայի լուրջ պարապմունքները:

Արիստոտել

Խաղի ժամանակ երեխաներին տվեք կատարյալ ազատություն,և դուք իսկույն կիմանաք նրանց սովորություններն ու հակումները:

Մ. Դեմկով

Երեխայի համար խաղն ամենալուրջ գործն է: Խաղի ժամանակ երեխայի առջև բացահայտվում է աշխարհը, բացվում են անձի ստեղծագարծական կարողությունները: Առանց խաղերի չկա և չի կարող լինել մտավոր զարգացում: Խաղը մի հսկայական լուսավոր պատուհան է, որի միջոցով երեխայի հոգեկան աշխարհ է թափանցում կենդանի հասկացությունների, պատկերացումների համախումբ: Խաղը ջանասիրության և հետաքրքրություն բոցավառող կայծ է:

Վ. Սուխումլինսկի

Գլուխ 2. Խաղային տեխնոլոգիաների կիրառումը դասերին

Դպրոցում ուսուցչի աշխատանքի և աշակերտների ուսումնական հաջողությունների արդյունքները չափվում են ձեռք բերված գիտելիքներով,կարողություններով և հմտություններով: Ուսուցման գործընթացում ճանաչողական հետաքրքրությունների համար խթան են հանդիսանում ուսուցումը հետաքրքիր դարձնելը,հետաքրքրաշարժ խնդիրների առաջադրումը: Առաջ քաշված խնդիրների իրականացման նպատակով անհրաժեշտ են այնպիսի հնարներ, որոնք ունենան և՛ ուսուցողական, ճանաչողական նշանակություն, և՛ լինի հետաքրքիր երեխաների համար : Այդպիսի հնար է խաղը:

Երբ երեխան մտնում է դպրոց նրա համար առաջատար գործունեություն է դառնում ուսումը,իսկ խաղի շնորհիվ այն դառնում է հաճելի ու ցանկալի:

Խաղը պետք է հանդես գա ոչ թե որպես առանձին հնար, այլ համաձույլ լինի ուսուցմանը,ծառայի ուսումնական նպատակին:

Մաթեմատիկական խաղերը կազմակերպվում են նոր նյութի հաղորդումը նախապատրաստելու, գիտելիքները ամրապնդելու նպատակով : Խաղի արդյունավետությունը պայմանավորված է ճիշտ կազմակերպման հետ:

Խաղը կազմակերպելիս անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալ պահանջները.

1. Խաղը և կանոնները պետք է հասկանալի լինեն երեխաներին
2. Խաղի բովանդակությունը պետք է համապատասխանի խաղացողների գիտելիքների մակարդակին
3. Խաղերի քանակն ու տևողությունը պետք է լինի չափավոր
4. Խաղը պետք է նպաստի գիտելիքների հարստացմանը և հետաքրքրությունների ձևավորմանը:

Յուրաքանչյուր խաղ կազմակերպելուց առաջ ուսուցիչը պետք է այն ենթարկի վերլուծության.

ա/ խաղի նպատակը,

բ/ խաղացողների թիվը,

գ/ գիտելիքների մակարդակը,

դ/ խաղի կանոնները:

Խաղի ընթացքում պահանջվում է կարգապահություն,ուշադրություն,ստացած գիտելիքների կիրառում:

Գլուխ 2.1 Խաղային տեխնոլոգիաների կիրառումը մայրենիի դասերին

Խաղը մարդուն ուղեկցել է նրա զարգացման փուլերում: Տարբեր տեսանկյուններից քննարկելով խաղային գործունեությունը, նշվում է որ խաղը մարդկային մշակութային համակարգի ուրույն և անբաժանելի մասն է:Խաղի միջոցով կարելի է կրթել ու դաստիարակել,ընդլայնել պատկերացումները շրջապատի, կյանքի և բնության մասին:

Մայրենիի դասերին կիրառվող խաղերն օգնում են ամրապնդել գիտելիքները. Ստանալ նոր գիտելիքներ, հարստացնել բառապաշարը, ստեղծագործական միտքը,լեզվամտածողությունը,հեշտ են ընկալում քերականական նյութը:

Ներկայացնում եմ խաղեր, որոնք օգտագործել եմ մայրենիի դասերին և լուծել ինչպես կրթական ,այնպես էլ դաստիարակչական խնդիրներ:

1.<<Գնացք>>

Մեքենավարին ասու եմ մեկնարկային բառը՝ <u>աշուն</u>: Մեքենավարը վարում է գնացքը դասարանում ,կանգ է առնում որևէ երեխայի մոտ և ուում.<<Ասա՛ աշուն բառի առաջին հնչյունը>>:Ճիշտ պատասխանելու դեպքում նրան դարձնում է առաջին վագոնը: Երեխան բռնում է մեքենավարի ուսերից և միասին պտտվում դասարանում ՝ հավաքում բոլոր վագոնները: Վերջում ներկայացնում են աշուն բառի հնչյունները երգելով ,իսկ մյուս աշակերտները որոշում են հնչյունների որակը ՝ ձայնավոր , բաղաձայն:

Այս խաղը կազմակերպվում է առաջին դասարանում : Խաղի միջոցով զարգանում է հնչյունային լսողությունը: Միաժամանակ դասարանում տիրում է ուրախ տրամադրություն և ակտիվություն:

2.<<Շոգեքարշ>>

Տրված բառերը տեղադրել համապատասխան վագոններում :

Գեղեցիկ, բացվել, ծաղիկներ, արև, ժպտալ, երկինք, բուրել, երփներանգ, անուշաբույր:

Տրված բառերով կազմել բառակապակցություններ, կապակցված խոսք: Խաղի միջոցով երեխաները հեշտությամբ յուրքցնում են քերականական նյութը, հարստանում է բառապաշարը, խոսք կառուցելու: Խաղը կարելի է կիրառել խոսքի մասերի ուսուցման ժամանակ:

3.<<Ծաղիկներ>>

Նպատակը՝ առարկայի հատկանիշ ցույց տվող բառերի ուսուցում,բառապաշարի հարստացում:

Ընթացքը՝ ուսուցիչը խմբերին բաժանում է <<ծաղիկ քարտեր>>,որոնց կենտրոնում նախապես գրված է որևէ բառ / օրինակ՝ ծաղիկ /: Երեխաները պետք է ծաղկի թերթիկներին գրեն կենտրոնում գրված բառի հատկանիշները / օրինակ՝ անուշաբույր, երփներանգ, սիրուն…/:

Առաջադրանքի կատարման համար տրվում է որոշակի ժամանակ: Հաղթում է այն խումբը, որն աշխատել է համագործակցված, արագ, առաջադրանքը կատարել է ճիշտ:

Ծանոթություն՝ խաղը զարգացնում է նաև խոսքային մտածողություն և համագործակցելու կարողություն:

4.<<Թեմատիկ բառաշարք>>

Նպատակը՝ Բառերի խմբավորում ըստ թեմայի:

Ընթացքը՝ ուսուցիչը հանձնարարում է երեխաներին գտնել տրված թեմային համապատասխան բառեր: Օրինակ ՝

. Դպրոց- ուսուցիչ, զանգ, գրիչ, գիրք, տետր….

. Ամառ-

. Գրադարան-

. Արձակուրդ-

Ծանոթություն՝ խաղը զարգացնում է նաև բառաբատրամաբանական մտածողությունը, հարստացնում բառապաշարը:

5.<<Կազմենք նախադասություն>>

Նպատակը՝ նախադասության կառուցվածքի մասին գիտելիքների ամրապնդում:

Ընթացքը՝ մասնակիցներից մեկն ասում է որևէ բառ: Մյուսը կրկնում է այդ բառը , դրան ավելացնելով իրենը,այնպեսմ որ այդ բառերը իմաստավորված լինեն՝ ձևավորելով նախադասություն:

Օրինակ՝ Կապույտ ….

Կապույտ մեքենան ….

Կապույտ մեքենան անցնում է …..

Կապույտ մեքենան անցնում է ճանապարհով……..

Կապույտ մեքենան անցնում է ճանապարհով , որը …….

Ծանոթություն ՝ Խաղը զարգացնում է բանավոր խոսքը, լեզվամտածողությունը, ստեղծագործելու կարողությունը:

6.<<Բառախաղ>>

Նպատակը՝ հականիշ և հոմանիշ բառերի ուսուցում:

Ընթացքը՝

ա/ Ուսուցիչը գնդակը նետում է երեխաներից մեկին և ասում է որևէ բառ, իսկ երեխան պետք է ասի այդ բառի հակառակ իմաստն արտահայտող բառը/ կամ հոմանիշը/ և գնդակը հետ նետի ուսուցչին:

Օրինակ՝

գեղեցիկ-սիրուն	մեծ- փոքր
վարս- ծամ	սև- սպիտակ

Ծանոթություն՝ խաղը զարգացնում է նաև բառատրամաբանական մտածողությունը,ընդհանուր շարժողական համակարգը, հարստացնում է բառապաշարը:

7.<<Նշել ավելորդը>>

Նպատակը՝ բառերի խմբավորում ըստ իմաստի,բառապաշարի հարստացում՝ բարոյագիտական հասկացությունների վերաբերյալ:

Ընթացքը՝ թվարկված բառերի շարքից երեխաներն ընտրում են ավելորդը,որն իմաստով չի համապատասխանում տվյալ բառախմբին:

. ժպիտ,ուրախություն,տխրություն,ծիծաղ….

. Բարություն,ուշադրություն,հոգատարություն, սառնասրտություն….

. օգնել, աջակցել,վնասել, լինել հոգատար…

Ծանոթություն՝ խաղ-վարժությունը զարգացնում է լեզվամտածողությունը:

Հոգանք ամբողջ ուժով , որ մեր սերունդները մեծանան առողջ և կյանքով լեցուն: Միայն այդ դեպքում նրանք կպահպանեն իրենց մտավոր կարողությունները:

Այդ նպատակին հասնելու միջոցը …խաղն է:

Եզրակացություն

Ուսումնասիրելով թեմային վերաբերվող գիտամեթոդական գրականությունը և համադրելով իմ մանկավարժական փորձը՝ եկա եզրահանգման,որ արդի ժամանակաշրջանում շատ նրբորեն պետք է ուսումնասիրել կրտսեր դպրոցականի տարիքային հոգեբանությունը,ճիշտ վերաբերմունք ցուցաբերել յուրաքանչյուր երեխայի անհատականությանը,ինչը կդառնա երեխայի կրթության և դաստիարակության հիմքը:

Այսօր ևս արդիական է խաղի դերը կրթության և դաստիարակության գործընթացում:

Խաղը զարգացնում է երեխայի ստեղծագործական կարողությունները , երևակայությունը,իմացական ոլորտը:

Խաղը երեխայի մեջ ձևավորում է ինքնուրույնություն,ինքնավստահություն, ակտիվացնում է ուշադրությունը,զարգացնում տրամաբանական մտածողությունը:

Օգտագործված գրականություն

1. Ա. Վ. Պետրովսկի <<Տարիքային և մանկավարժական հոգեբանություն>><<Լույս>> հրատարակչություն,Երևան- 1977
2. Վ. Ա. Սուխումլինսկի <<Սիրտս նվիրում եմ երեխաներին>>,<<Լույս>>հրատարակչություն,Երևան-1977
3. Ա. Ե. Տեր- Գրիգորյան <<Ուսուցումը նոր առաջին դասարանում>>, <<Լույս>> հրատարակչություն,Երևան -1986
4. <<Նախաշավիղ>>-7.2012, 2.2016, 3.2016, 4.2016